ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/10 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
8	Մաքսային մարմնի իգական սեռի հանրային ծառայողի կիսաշրջազգեստ Մաքսային ծառայության գեներալ-լեյտենանտի, գեներալ-մայորի, գնդապետի, փոխգնդապետի, մայորի, կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչումներ ունեցող մաքսային մարմնի հանրային ծառայողների կիսաշրջազգեստը (Նկար 43) մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) կտորից է՝ ուղիղ, նստեցված ուրվագծով, ձախ կողմից՝ մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) գաղտնի շղթայով և մետաղական կեռիկով կոճկվող, հետնամասում՝ բացվածքով: Առաջամասի ձախակողմյան հատվածը՝ եզրակարված 2 մմ լայնությամբ կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) եզրաքուղով: Գոտու լայնությունը՝ 4 սմ, առաջամասում՝ 2 մմ լայնությամբ կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) եզրաքուղով եզրակարված, սուրանկյուն եզրերով ավարտվող, 22 մմ տրամագծով 2 ոսկեգույն մետաղյա գլխիկավոր կոճակներով (Նկար 83) կոճկվող, 20 սմ երկարությամբ և 4 սմ լայնությամբ ներկարված դեկորատիվ գոտի: Գոտու ներսի հատվածում՝ պիտակ (Նկար 87): Կիսաշրջազգեստի երկարությունը՝ 64-74 սմ (ըստ չափ/հասակի): Կիսաշրջազգեստի կտորը՝ 67 տոկոս բրդի և 33 տոկոս Պ/Է խառնուրդ՝ 250 գր/քմ ±5% խտությամբ, աստառը մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG)՝ պոլիէսթերի ատլասից: ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ *Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը իր միջոցներով և իր հաշվին: **Յուրաքանչյուր համազգեստի վրա պետք է լինի համապատասխան պիտակ, որի վրա պետք է նշված լինի կտորի կամ գործվածքի բաղադրությունը (տոկոսային հարաբերակցությամբ) և ապրանքի խնամքի առանձնահատկությունները

	(պատկերների կամ մակագրությունների տեսքով): ***Յուրաքանչյուր ապրանք պետք է ունենա առանձին փաթեթավորում, որի վրա պետք է նշված լինի անվանումը, չափսը, արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: ****Յուրաքանչյուր համազգեստի այն տեսակը, որի վրա առկա է կոճակ պետք է ունենա միևնույն կոճակից մեկական պահեստային օրինակ, որը պետք է ներսի կողմից պիտակով ամրացած լինի տվյալ համազգեստին: *****Յուրաքանչյուր չափաբաժնով նախատեսված ապրանք, ըստ սեռերի, չափսերի և/կամ կոչումների, պետք է տեղադրված լինի առանձին ստվարաթղթե արկղերում: ******Մատակարարը ապրանքի մատակարարումից առաջ պետք է համաձայնեցման ներկայացնի յուրաքանչյուր ապրանքատեսակից մեկ օրինակ որպես նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու նպատակով: Հաստատված նմուշը հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս: Նմուշի հետ համատեղ՝ մատակարարը պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերի նմուշները՝ ամրացված Ա4 չափի գծագրական թղթի (ստվարաթղթի) վրա: Ներկայացված նմուշները ստորագրում է Մատակարարը, որոնք հաստատվում կամ մերժվում են մասնագիտական խմբի կողմից՝ ներկայացնելուց ոչ ուշ քան երկու աշխատանքային օրվա ընթացքում: *******Մաքսային մարմնի հանրային ծառայողների կոչումների քանակը, համազգեստի և բաղկացուցիչ պարագաների չափսերը, լրացուցիչ կտրամադրվեն պատվիրատուի կողմից՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, Մատակարարի էլ.փոստին ծանուցում ուղարկելու միջոցով: ********Մանրամասների համար օգտվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի «Մաքսային մարմնի հանրային ծառայողի համազգեստի ձևը սահմանելու մասին» N 1910-Ա որոշման դրույթներից, որում ներառված են յուրաքանչյուր չափաբաժնի տեխնիկական բնութագրում համապատասխան համարնով նշված նկարները, ինչպես նաև համազգեստի բաղկացուցիչ մաս կազմող մաքսային մարմնի հանրային ծառայողի տարբերանշանների տեխնիկական բնութագրերը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
8	